



չափիչ համար թողնում ես որ կոտորեն: Բայց ես միշտ կուեւրեմ, քաղաքի մեծ շահերը վտանգելու չափ, մինչեւ որ կազատվեմ: Եւրոպան ճանաչեց հային, թէ եւ լուեց, բայց աւելի լաւ կարծիք կազմեց քան առաջ ունէր: Եւ միայն խիմա է որ մենք կարող ենք յոյս ունենալ թէ մեզ համար նպատակաւ քաղաքական վայրկեանում մեր զէնքովը կըստանանք մեր ազատութիւնը...

ՎԱՐՅՈ

ՄԱՐԻ—ԼՈՒԻՉ

ԻՇԽԱՆՈՒՇԻՈՅՆ ՄԱՀՈՒԱՆ ԱՌԹԻ

Ամսոյս 20ին տեղի ունեցած նախարարական ժողովը ընդունեց հետեւեալ որոշումները որոնք հաւանութիւն գտան նաեւ Ն. Ա. Բ. Իշխանին կողմէն:

Ն. Ա. Բ. Իշխանուհւոյն մարմինը պիտի ցուցադրուի պալատին մատարան մէջ ուր բաժնիչաբաժնի կերակրի և երկուշաբթի օրերը: Թաղումը պիտի կատարուի շտաբը շաբթի օր, 27 յունվար, արարողութեանց պաշտօնական ծրագրի մը համաձայն: Տէրութեանց ներկայացուցիչները արարողութեանց պիտի հրաւիրուին: Նախարարներու խորհուրդը, գիւանադիտական մարմինը, Իշխանութիւնները և պատգամաւորները, չորեքշաբթի օր առաւօտեան ժամը 8ին պիտի ժողովուրդին պալատին մէջ:

Ն. Ա. Բ. Իշխանուհւոյն մարմինը պիտի փոխադրուի Ի. Փ. Պուլիս, Ս. Լիւրիքէ կեղեցիկին մէջ պահելու համար մինչեւ որ Սօֆիաի մէջ Իշխանուհւոյն դամբարան մը կառուցուի:

—Սօնթէնէկրոյի նիքուա Իշխանը Ֆէրտինանտ Իշխանին ցաւակցական հեռագիր մը զրկած է և հրամայած է որ երեք շա-

բաթ սուգ պահուի իր երկրին մէջ:

—Սուլթանը Իշխանին ցաւակցական հեռագիր մը զրկած է ամենաջերմ լեզուով և ծանուցած է պալատական բարձր անձնաւորութեան մը Սօֆիա առաքումը, իր հետ բերելով Սուլթանին ինքնագիր մէկ նամակը:

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

Փ. Պուլիս, 21 Յունի.

Ս. Մենդեան յուզեալ օրերն անցան: Քաղաքիս լուրջ երիտասարդութիւնը իր վճռական քայլին մէջ յաղթական, ապստեղանալ տարբը մէկ հարուածով չէզոքացման գառապարտելէ ետք հիմա կը պատրաստուի լուրջ ու խաղաղ աշխատութեամբ նոր տարրեր կազմել անոնց յանձնելու համար ազգային գործերու կանոնաւոր ղեկավարութիւնը: Այլ եւս երիտասարդութեան աւալին հողածութեան առարկան պիտի ըլլայ անշուշտ իր վարժարանը, այն խեղճուկ, այլանդակ իր անկանոնութիւնովը ամբողջ Պուլիարիոյ մէջ եղական վարժարանը, որ Ֆիլիպէի հայութեան միշտ կենդանի նախատինքն է, և ուր կը փտաին անխեղճօրէն նոր սերունդի բոլոր մատաղ ծաղիկները...

Եւ սակայն վերաշինութեան գործին սկսելէ առաջ, քիչ մը միջոց պէտք է ձգել որպէսզի այդ պղտորած, աղտոտած տարրերը բոլորովին զտուին և երիտասարդութիւնը կարողանայ անգամ մը սկսելէ ետք, անընդհատ ու անարգել շարունակել իր գործը: Արդէն անթիւնեւր խումբը յուսահատ ու վարկաբեկ եղած է: Անթիւ առաքելալը հեռացած է քաղաքէս գէպի շըրջակայ կայարանները, խեղճ Հայաստանցի մշակները կողոպ-

տելու համար: Արդէն Պուլիարի մէջ, հին խաբեբայի մը հետ յաջողած էր քանի մը հարկուր ֆրանք շորթել: Այդ յուսով ալ հոս եկած էր, բայց հազիւ կըրցաւ վերարկու մը շորթել, իր բոլոր պայմանագրեալ բանաձեւները շարունակել և հազարութեկ քծնողական շարժումներով առ ուն շողին փէշերը լզուրուակելէ ետք:

Իսկ ըմբիշ վարդապետը ալ ոչ մէկ յոյս ունի յաջողելու: Իր մաւորական, բարոյական, ֆիզիքային ու փողոցային բոլոր պաշարը ի զուր թափելէ ետք, իր սուր ծրագիրներուն փոփոխութեամբը կը պատրաստուի մեկնել ասկէ: Համբաւաւոր թըրքամուր յայտարարած է թէ՛ ամէն միջոց գործադրած է որ Արսէն վարդապետ հոս մնայ, բայց չէ յաջողած:

—Մարի—Լուիզ Իշխանուհւոյն թաղման առթիւ, քաղաքիս հայ վաճառականները բանակցութեան մտած են Վառնայի և Ռուսոմի քի հայ վաճառականներու հետ, թաղման հանգէսին պատգամաւորութիւն մը զրկելու և փառաւոր պսակ մը պատրաստելու համար: Այս առթիւ որոշած են մինչեւ 150 սակի ծախք ընել:

Թղթակից

ՆԱՍԱԿ ԽՍՐԱԳՐՈՒԹԵԱՆ

Աղքատախնամ մասնախումբս պարտք կը համարի հրապարակաւ իր շնորհակալիքն յայտնել Ֆիլիպէի այն բարեսէր ազգայնոց սրբ սիրալոյսմար մասնակցեցան Ս. Մենդի առթիւ բացուած հանգանակութեան, որուն գումարն 410 ֆրանքի յանգած ըլլալով՝ Աղքատախնամ կրցաւ սօնական օրերու մէջ համեստ կերպիւ 45 աղքատ ընտանիք-

ներ մխիթարել և 25ի չափ մանչ և աղջիկ աղալոց հագուստ և կօշիկ բաշխել:

Աղքատախնամ իր չեմօն շնորհակալիքն կը յայտնէ նաև Մեծ Տ. Կարապետ Կոթիքի որ յօժարակամ ընկերանալով հանգանակութիւնը կատարող անդամոց իր աշխատութեամբ մեծապէս օգտակար եղաւ գործին:

Մասնա յարգանք

Ի դիմաց Աղքատախնամ Մասնախումբի Ատենադպիր Ատենապետ Ա. Յ. Սիլանեան Յ. Գ. Երիսնեան ֓. Պուլիս, 21 Յունվար 99

Մ. Խ. — Մինչդեռ Ֆիլիպէի հայ հասարակութիւնը, հակառակ իր ներքին կոիւնքներուն, մէկ կողմէն կաշխատի իր աղքատները մխիթարելու և անոնց ըստ բաւականին ապրուստ հայթայթելու, ձրի դիպ մասակարարելու, հպուստ, կօշիկ բաշխելու, ինչ կընեն մեր Վառնայի Հայերը: Հոս բողոքատար անհամաստ է թշուառներու, արնանկներու, որբերու թիւը որոնք օրերով պատառ մը չոր միսի երես տեսած չեն: Մեր խղճին առջեւ ինքզինքնիս յանցաւոր չենք գործերը կը ստանանք այն 4—5 տարեկան փոքրիկ երեխաները որոնք, գիշերուան մինչեւ ժամը 9 կամ առսր սրճարանէ սրճարան կը թափուին լուցիկ կամ սիկաոսի թողթ ծախելով քանի մը փորա շահելու համար: Ինչո՞ւ չենք աշխատիր ձըմետուան այս անտանելի ցուրտերուն սիփիւլայի չքաւորները: Աղքատախնամի մը պէտքը սուկի քան երբէք զգալի է քաղաքիս մէջ:

ՀԱՅՐԵՆԻՔԻ ՅԷՄԱՍԿՆԵՐ

Մշոյ դաշտի արեւմտահարաւ թոյթի սահմաններու մօտ կը գըտնուի Աղբնիս Մուսարեկի գեղը, թէեւ այդ արիւնհարու գաղանը՝ իր բնակավայրէն Մէքքէի կողմը հեռացուցուած է, սակայն անոր եղբայր ձազօն ու Մուսայի «լաւ մեկները» նուազ շարիք չեն թափեր տեղացի հայ ժողովրդեան

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԾՈՒԼՈՒԹԻՒՆԸ

Նախորդ թիւ մէջ մենք ցոյց տւինք, որ անբաւարար սնունդը որոշ գեր է կատարում ծուլութիւն առաջ բերող պատճառներ շարքում: Վատ սնված մարդու օրգանիզմը չէ կարող բաւականին առատ ոյժեր արտադրել, որպէսզի նրան աշխատասէր դարձնի: Բայց բաւական չէ միայն առատ սնունդ ունենալ, պէտք է նաեւ առողջ մարմին, որ կարենայ սնունդը իւրացնել և օգտուի նրանից: Ինչպէս մի խանդարված մեքենայ չի գործիլ, ինչքան էլ որ նրան լարես, նմանապէս հիւանդ մարդուն աշխատասէր չես դարձնիլ միմիայն առատ սնունդ մատակարարելով: Մինչեւ որ իր խանդարված օրգանիզմը չը կանոնաւորվի, չառողջանայ: Մեր խօսքը այն ծանր հիւանդութիւնների մասին չէ, որ ամենքի աչքին են դարձում. այդ սեռակ հիւանդներից ոչ ոք աշխատանք

չէ պահանջում, ամեն մարդ ընդունում է, որ նրանք իրաւունք ունեն հանգստանալու: Մենք ինկատի ունենք մասնաւորապէս այն թագուն հիւանդութիւնները, որոնց որոշելու մէջ նոյն իսկ մասնագէտ բժիշկներն էլ են դժուարանում. մեր խօսքը այն բազմատեսակ սկարու թիւնների մասին է, որ առաջ են գալիս մարդու մարմնի հիւանդութիւնների ներքին փոխանակութիւնների խանգարումից, և կամ թէ սերտ կապ ունեն նրանց հետ, — հիւանդութիւններ որ դեռ ևս հիմնաւորապէս չեն ուսումնասիրված, և որոնց մասին գիտութիւնը դեռ չի սսել իր վերջի խօսքը:

Այդ սեռակ հիւանդների սկարութեան նշանները սովորաբար աչքի չեն ընկնում, երբեմն այդ դասի մարդիկ կատարելապէս առողջ և նոյն իսկ յաղթանգամ են երեւում անփորձ մարդու աչքում. սոցա հասարակութիւնը նրանց հայածում է, արհամարում ու պախարակում է, իրբեւ ծոյլերի, ինչպէս մի ժամանակ նոյն խաւար ամբոխը խելագարնե-

րին հիւանդի տեղ չէր ուզում ճանաչել և այդ թշուառներին չղթայում էր, տանջում և մինչեւ անգամ մեռցնում: Բայց գիտութիւնը միջամտեց, խլեց խելագարների անզուրկ ու ազէտ ամբոխի ձեռքից և մասնաւոր հիւանդանոցներ յատկացրեց նրանց: Նոյն դերը պիտի կատարէ և կատարում է գիտութիւնը մի շարք ծոյլերի նկատմամբ: Օրինակ, հազիւ երեսուն տարի սրանից առաջ Արիւստիկան կոչված ջղային հիւանդութիւնը դեռ չէր ուսումնասիրված, դեռ անյայտ էր մարդկութեան համար, ո՛չ թէ այն պատճառով, որ գրոյթիւն չուներ, այլ որովհետեւ դեռ չէր հետազոտված: Այդ հիւանդութեան բնորոշ գծերից մէկն էլ այն է, որ հիւանդը անընդունակ է սովորելու ու յարստեւ աշխատանք արտադրել: Հասարակ մահկանացուները որ, բնականաբար, չէին ըմբռնում թէ ինչ է արգելում այդ սեռակ անհասանելի աշխատասէր լինել՝ նա մասնաւորապէս հիւանդութիւնը արտաքին, հեշտ նկատելի նշաններ չէ ներկայացնում՝ կեղծ սկարներ, ծոյ-

լեր էին անվաճում թշուառ նկիրասեհնիկներին: Բայց լժկական գիտութիւնը առաջացաւ, ուսումնասիրեց այդ նոր հիւանդութիւնը, ցոյց տուաւ որ Արիւստիկանից մեք կարեկցութեան ու օգնութեան են կարօտ և ամենեւին արժանի չեն, իրբեւ ծոյլ, այն նախատինքների, այն անարգանքին ու ծաղրանքներին որ թափում էր և թափում է մինչեւ օրս նրանց գլխին ազէտ ամբոխը: Գիտութիւնը իր հովանաւորութեան տակ ստաւ այդ սեռակ սկարների և աշխատում է նրանց պաշտպանել թէ աննպաստ հասարակաց կարծիքի դէմ, և թէ միանգամայն զանազան միջոցներ ու մետօցներ ձեւանարկեց նոր ուսումնասիրուած հիւանդութիւնը բժշկելու համար:

Այդպէսով մենք սեռանք, որ վերջին քառորդ դարու ընթացքում ծոյլերի գասից մի մասը աստիճանաբար անցաւ հիւանդների շարքը: Բայց գիտութիւնը սահման չունի և իր անընդհատ զարգացման ընթացքում, հաւանօրէն, դեռ շատ շատերի ծուլութեան պատճառը կը

գլխին : Վերջին դէպքերուն, այդ հրէշ արարածները, իրքայ անբարոյական զօրքերուն միանալով անպատմելի շարքերն զօրծած են Վարդենիս, Արտոնք, Խարց և ուրիշ հայ գիւղերու մէջ, ու Վարդենիս նշանաւոր հայ գիւղը — Մարգար վարժապետի հայրենիքը — անբնակ դարձուցած են : Ահա՛ թուրք Սուլթանին այն ամէն բարի տրամադրութիւնները որոնք ի գործ դրուելու համար, ելլալով զժողովին մէջ՝ սահալելական խորհուրդներ յղացած են :

Արեւելեան վերջին պատերազմէն առաջ՝ Մշոյ մի թէսար/ֆոթեան սանճագը կարնոյ նախկին ընդարձակ կուսակալութեան կը վերաբերէր : Բայց թուրք կառավարութեան խորամանկ ներքին քաղաքականութեամբ՝ այդ պատերազմէն ետք՝ Հայաստանի մէջ քանի քաղաքները առանձին նահանգներու (վիլայէթի) վերածուեցան, որոց կարգէն է նաեւ Պիթիւի, և հետեւագետ՝ Մուշ քաղաքը իր սանճագով Պիթիւի կուսակալութեան ենթարկուեցան : Մշոյ մի թէսար/ֆոթեան կը վերաբերին, Սասուն, Խոյթ, Չիուր գիւղաքաղաքները Մշոյ նահանգին դաշտը, Խորխոտունիք, Մանալիբրտ ընդարձակ դաւառներն և գեւուրիշ մանր ու մանր գաւառակներ :

Մշոյ դաշտին հարաւային արեւմտեան կողմէ, ստորինաբար երկրի գիւղը կը բարձրանայ մինչեւ Տաւրոսի բարձր գագաթը : Այդ ընդարձակ դաշտը իբր նախադուռ պարզուելով բարձր լեռներու ամեն հի սեսարանին, սեղ տեղ անշտուած է շատ մը մեծ ու փոքր բլուրներով, որոնց ընդարձակ տարածութիւնը խիստ զբաւիչ և ետարան մը կը ներկայացնէ Սիւսարի բարձրութիւնէն :

Մշոյ դաշտին ուղղուելով մեր քայլերը դէպի Սասունի լեռնային երկիրը, առաջին անգամ կը մտնենք Շատաղ գաւառակը : Այս Շատաղը պէտք չէ շփոթել Մուկայ Աշխարհի արեւելահայ սիւսեղոյ համանուն գաւառին հետ, Տարնոյ պատմագիր Չենոբ Գլակ իր պատմութեան մէջ այս գաւառի մասին կը ծանօթագրէ այսպէս : «Իշխանն Արշուոց կողմանն, Կէորդ շատախօս որ, կոչեաց զանուն գաւառին իւրոյ Շատաղ, վասն աւելի անուան իւրոյ» : Չենոբի այս հակիրճ ծանօթագրութիւնէն կը հետեւի որ, նախնիք այս գաւառը «արջերու երկիր» կանուանեն եղեր : Իրօք այդպէս է. այդ լեռնային երկրի անմատչելի գագաթներն ու փայտները՝ սեռակ տեսակ զաղաններու՝ ու թանձր անտառները հսկայ արջերու բունք են : Խոյթ գաւառակը Շատաղին սահմանակից է իր անտառախիտ լեռանց շարքով : Խոյթոյ անտառուտ ու բարձր լեռներէն միոյն լանջքին շինուած է Խոյթայ Ս. Աղբիւրիկի հոշակաւոր վանքը : Այս վանքը իր ծոցը պարունակող կենաց փայտի նշխարով մեծ հրաշքներ գործած է այդ աշխարհի շերտնաւոր ժողովրդեան մէջ, ու այդ պատճառով տեղացիները անոր մատուցելու կը կոչեն «Գործել յարուց Ս. Խոյթ» : Կաւանդեն թէ՛ որ մը հայ կին մը թոնիր վաւած ու հաց թխելու պարագամ միջոցին, իր փոքրիկ երախան վառուած թոնիրին մաղմաղ կրակին մէջ կ'իյնայ ու ուրբով ածուխ կը դաւնայ : Խեղճ կինը՝ երբ իր սրտի կտորին ածուցած գունդը գուր կը հանէ, խելոյց Ս. Աղբիւրիկի Ս. Նշանին կը գիւմէ, ու հաւատքի անուրանալի զօրութեամբ՝ Գործելի (ածուխ) տրած երախային մարմինը յարութիւն

կառնէ : Այս վանքի հրաշքներուն հայերէն աւելի կը հաւատան տեղական բոլոր քրիստոնէսները, մանաւանդ Պալքիցի կամ Պըլքիցի աշխարհը, որուն հայկական ծագումէ առաջ եկած ըլլալը իրենք իսկ կը խոստովանին, ու իրենց մէջ կը խօսին ու կերդնուն Խոյթի ու Սասունի հայոց նման հայերէն լեզուով : Հայերուն նման Պալքիցի քրիստոնէսներն ալ ամէն տարի մատաղ և ուխտ կը կատարեն այս վանքին : Այնքան զօրաւոր է այս վանքի ազդած հրաշքի ազդեցութիւնը որ, իրենց ու իրենց անասուններու վրայ եկած ամէն ցաւի ու ցեցի դեղ ու զարմանանոր Ս. Նշանին խաչահանդստէն կը հայցեն, ու միշտ կիրազործաւ իրենց մուրաւը : Հայաստանի ընդհանուր կոտորածին ամէն հայ վանքեր անխնայ կողոպտուեցան, քար ու քանդ լինելու վիճակին ենթարկուեցան, մինակ այս վանքը անձեռնմխելի մնաց, հաւատքի այն խորին սկիւնածութեամբ՝ զոր Շատաղու, Սասունի, Խոյթայ, Մօականու, Զուկանու ու Խարզանի թէ հայ և թէ քրիստոնէսները կը տածեն անոր մասին :

ՆԱՀԱՊԵՏ

(Շարունակելի)

ՏՕՔԵՐՈՐ Յ. Ս. ՓՈՓՈՋԵԱՆ ԱՏԱՄՆԱԲՈՅԺ

ՎԿԱՅԵԱԼ ԲԱՐՈՒՅԻ ԱՏԱՄՆԱԲՈՒԱԿԱՆ ՎԱՐՓԱՐԱՆԵՆ

Հիւանդ կրկնուելի առեւ օր առաւօտեան ժամը 9 ԺՆ մինչեւ երեկոյեան 5 իր բնակարանին մէջ Տրակուսն փողոց, 1206, Մուսաղլու :

ԿԻՐԱԿԻ ՕՐԵՐԸ ՄԻՆՉԵՆ ԿԵՍ ՕՐ

Թերեւս աշխատանքի մասնաւորութիւնը այնքան էլ չը նվազեցնէր մարդու աշխատասիրական ոգին, եթէ գոնէ նա ազատ լինէր ընտրել իր արհեստը կամ պարագայունքը իր ընդունակութիւններին ու հակումներին համեմատ : Բայց այդ էլ չը կայ : Արդեօք շատ անհասանելի կը գտնէք ներկայ հասարակական կացութեան մէջ : Որ ազատ կերպով ընտրած լինեն իրենց գործը : Եթէ ճշնիչ հացի խնդիրը չը լինէր, արդեօք շատեր կը շարունակէին այն աշխատանքը, որ այժմ ստիպով յանձն են առել որպէսզի անօթի չը մնան, մինչդեռ իրենց ընդունակութիւններն ու ճաշակը այլ ասպարէզների վրայ են հրաւիրում նրանց գործել : Գոյութեան խնդիրը ստիպում է անհասանելի պատճառով աշխատանքը յանձն առնել — դեռ բախտաւոր համարելով իրեն երբ որեւէ գործ է գտնուում : Բնականաբար այդպիսի մի ստիպողական աշխատանքը ապագանակիր է թվում բանուորին, ինչպէս բուն ստեղծողի կիր աշխատանքները՝ գաղապարով յանձնաւորներին : Սիրով չը վե-

ՔՐՈՆԻԿ

Կը լսենք թէ համբաւաւոր Արսէն վարդապետ Վեհուհի կը պատրաստուի Վառնա դալ իր շահատակութիւնները հոս ալ փորձելու համար : Մենք զինքը կը խրատելինք որ օր առօր իր հայրենիքը, Սիւսարէ ուղեւորէր, եթէ կը փափագի որ վրան մնացած քիչ մը պատուոյ զգացումէն չի զրկուի : Հոս հաց չի կայ այդ կարգի մարդոց :

—Նուպար փաշախ մահուան առթիւ Ֆիլիպէի Հայոց եկեղեցւոյն մէջ հոգեհանգստեան պաշտօն մատուցուած է և ցաւակցական հեռագիր զրկուած այրի տիկին Նուպարի որ փոխադարձ հեռագրով իր շնորհակալութիւնը յայտնած է :

—Մարի Լուիզ իշխանուհու մահուան առթիւ հոգեհանգստեան պաշտօն մատուցուած է Վառնայի : Ռուսուքի, Ֆիլիպէի և Պուլկարիոյ բոլոր հայ եկեղեցիներուն մէջ :

—Կարնեցի և Կովկասաբնակ հայ հարուստ մը որ Պոլսոյ մէջ բրդի հիւսարան մը ունէր, մօտ 40,000 բուրլի արժողութեամբ, ամբողջովին նուիրած է Կ. Պոլսոյ Ս. Փր'չի հիւանդանոցին, այն պայմանով որ հիւանդանոցի վարչութիւնը հիւսարանը բանեցնելով՝ արդիւնքին մէջ մասը իր որբանոցի պահպանութեան գործածէ, իսկ միւս մասը պահեստի գնելով, հինգ տարին անգամ մը որբանոցի սաներէն մէկը եւրոպա զրկէ հիւսուածագործութիւն սովորելով նոյն գործարանին մէջ աշխատելու համար : Յանձնառն գործողութիւնները սկսած են կատարուել պատրիարքարանին հետ :

Այս ճամբտապէս ազգասէր անձը որ իր անունը ծածուկ կուղէ պահել, արժանի է ամէն

գտնի մարդկային մարմնի աւել կամ պակաս խանդարման մէջ :

Մեզ մեռած է այժմ մասնաւորապէս անել ծուլորթիւն առաջ բերող մի այլ շարք պատճառներ, որոնք սերտ կապ ունին ներկայ հասարակական կողմակերպութեան հետ և հետեւանք են մի կողմից, աշխատանքի ծայրահեղ բաժանումի և միւս կողմից, այն հանգամանքի, որ աշխատատեղերի անապահ մեծամասնութիւնը կարողութիւն չունի ազատ կերպով ընտրել իրեն գործն ու արհեստը :

Մարդս մի անշունչ մեքենայ չէ, որ օրը օրից անդադար կրկնէ միևնոյն գործողութիւնները, կատարէ միևնոյն շարժումները, առանց ձանձրանալու և զգովելու : Մենք նոյնչափ պէտք ունինք աշխատանքի փոփոխման, ինչքան որ զանազան օւսելիքներին : Ինչպէս միտասեղանի սնունդից մեր ստամոքսը յոգնում է, անորժակը փակվում է և մարտդու թիւնը խանգարվում, նոյնպէս միտասեղանի աշխատանքը մտորգուս ձանձրացնում է, մեղմում է

նրա մէջ եռանդը և նրան ստիպում է խոյս առլ աշխատանքից :

Եւ իրաւ, ներկայ հասարակական կարգերի մէջ մենք տեսնում ենք մի կողմից, որ գործաւորները և արարհեստաւորները շարունակ դատապարտված են զրկելէ բացառապէս միտասեղանի ֆիզիքական աշխատանքի, իսկ միւս կողմից մտաւոր մրցակցը գործի է մնում մկանական աշխատանքի բարեբար ազդեցութիւնից :

Աշխատանքի ծայրայիղ բաժանումը և միտասեղանութիւնը մարդու թրջ չի աւելի իր բոլոր ֆիզիքական ու մտաւոր ընդունակութիւնները զարգացնել, նրա գոյութիւնը դարձնում է միակողմանի, սահմանափակում է նրա զգացմունքները չը շարունակ, որով մարդ կարողութիւն չի ունենում վայելել կեանքը բոսի բնորոշակ և լայն իմաստով : Աշխատանքի բաժանումը մարդու փիճակը անգոյն և միտասեղանի զարձնելով, մեղմում է նրա մէջ եռանդն ու սէրը դէպի իր գործը զէպի իր աշխատանքը, և այդպիսով նրան դարձնում է ծոյլ :

բարեբախտ իրենց գործին, որովհետեւ չեն ընտրել իրենց ազատ կամքով, զարմանալի չէ, որ շատ աշխատաւորներ ծուլանում են :

Այդպիսով մենք տեսնումք, որ ծուլորթիւնը ո'չ մարդու վատ կամքի հետեւանքն է, ո'չ էլ նրա բնատրութեան յատուկ մի բան : Մարդիկ բնական պահանջ ունին աշխատելու բայց երբեմն նրանց մարմնային ուժերը սպառուած, մի յայտնի շարք հիւանդութիւններ և աշխատանքի այլանդակ հասարակական պայմանները փոքրացնում են կամ մեղմում նրանց մէջ աշխատասիրական ոգին :

Եթէ ուզում էք վերացնել ծուլութիւնը հասարակութեան միջոցով, վերացրէ՛ք նրա պատճառները, այն է՝ —լու սնունդ սուէ՛ք աշխատատեղերին, զարմանեցէ՛ք սկզբներին և վերակազմեցէ՛ք հասարակութիւնը այնպէս, որ համայնութեան սպորտսը հայթաթովի ազատ աշխատանքով և ո'չ թէ մարդիկ ստիպմամբ աշխատին սպորտսի համար : ՄԻՐՉԱՍՍԻԱՆ ՎԵՐՁ

յարգանքի և Գանկալի է որ մեր Պոլսեցի հարուստները օրինակ առնելն առաջն առնանա՞նք...

— Յիշուէ՛ք, եկեղեցւոյն մէջ տեղի ունեցած անկարգութեանց վերաբերեալ զորութիւնները Կրօնական ժողովին յանձնուած ըլլալով քննութիւն, յիշեալ ժողովը որոշեց երկու վարդապետներն ալ պաշտօնէ զազրեցնել և հրահանգ զրկել էախնէի նախորդ առաջնորդական տեղապահ Դերձակեան Տ. Արսէն քահանայի որ հակէ նոր կազմութիւնը Խոյզ խորհրդայ ընտրութեան գործողութեանց վրայ:

Տ. Գեորգ վարդապետ արդէն պաշտօնով Խ. Բաղարճըզ մեկնած ըլլալուն Կրօն. ժողովը լաւ կընէր եթէ օր առաջ Արսէն վարդապետն ալ հեռացնէր Ֆիլիպէէն:

— Վանի շրջակայքը կրօնափոխութիւնները դարձեալ կը շարունակուին: Կտր Գարի մէջ իրենց մայր եկեղեցիէն չի բաժանուող քանի մը տուններն ալ համակերպեցան դաւանափոխ ըլլալու: Կաթողիկ վարժարան մը սկսած է շինուիլ այդ թաղին մէջ:

Նոյն կողմերը Այիճեանց թաղի ազգայինները, 110 տունէ բաղկացած, դարձեալ կաթողիկութեան դիմած են, իրենց թաղապետին առաջնորդութեամբ:

Բիւզանդեան Մարտիրոս անուն վարժապետ մը կաթողիկեանքու տրամադրութեան տակ դրած է իր վարժարանը ուր 200 հայ աշակերտուհիներ կը յաճախէին: Վարժապետը ու տղան լեցունկեկ ամսականներ պիտի ընդունին:

Նոյն կողմերէ եկած լուրերէ կը տեղեկանանք թէ դեռ հարիւրաւոր ընտանիքներ խումբ խումբ կաթողիկութեան կը դիմեն: Ի՞նչ կընեն մեր ազգային իշխանութիւնները, ականջներն չի՞ լսեր:

**ՔԱՂԱՔԱՎԱՆ ԴԵՊԲԵՐ**

Թ Ո Ւ Ի Բ Ի Ս  
Սուլթան Համիտի կեանքին դէմ նիւթուած դաւադրութիւն մը վերջերս երեւան ելած է: Նախկին Եպարքոս Խայրէատին փաշաի երկու զաւակները որոնց մին Սուլթանին թիկնապահ ու միւսը պալատական բարձր պաշտօնէն մը ստիպուեցին Պոլսէն փախչիլ: Կը վախցուի որ Պալատան մէջ Երիտասարդ Թուրքերու խումբ մը ժամանակէ մը ի վեր կը գործէ: Ոստիկանութեան անխոհեմ փութկոտութիւնը շորս անձեր ձերբակալելու համար, առիթ տուած է մնացածներուն զգուշութեամբ շարժելու:

— Սուլթանը պատախանելով Սերպ կառավարութեան Բ. Գրաննեկայացուցած մէկ բողոքագրին, ապանական սահմանադրութիւն վրայ տեղի ունեցած անկարգութեանց մասին, ըսաւ թէ՛ պատահած 22 սպանման ու թալանի հեղինակները կարելի չէ եզր զանել, և թէ, 7 պարագաներուն մէջ ալ անձնու, զոհերու և բնակավայրերու ախտները անձառօթ են Թուրք կառավարութեան Սերպ լեզուս գրուած ըլլալով: Ուստի շորս պարագայ կընդունի իբր վիճելի:

— Թուրք կառավարութիւնը դիտարոթ թիւն ունի ծանուցագիր մը զրկել Մեծ Պետութեանց բողոքները համար այն ոտնձգութեանց դէմ շորս Անգլիական կառավարութիւնը կը կատարէ Սուտանի մէջ, որ Եգիպտական զաւառ մը ըլլալով Օսմանեան դերիշխանութեան տակ պէտք է գտնուի:

— Թուրք թերթերը ուս պաշտօնաթերթերէ քաղելով կը գրեն թէ, Պալքանեան թերակղզիին մէջ նշմարուած մօտակայ խառնակութեանց արգիւնաւորութիւնը շատ տարակուսելի է, մանաւանդ որ ուս կառավարութիւնը աւելի քան երբեք պէտք ունենալով թուրքին հետ մտերմական յարաբերութիւններ պահպանել, երբեք չի կրնար քաջալերել այդ կարգի խլրտումներ, և հետեւաբար ամէն ճնշիչ միջոցներու առջեւ անտարբեր պիտի մնայ:

**Ֆիլիպպեաներու կազմութիւնը**

Ֆիլիպպեաներու կազմութիւնը երթալով կը ծանրանայ: Օթիս հրամանատարը ծանուցեր է իր կառավարութեան թէ այլեւս անկարելի պիտի ըլլայ երկար ատեն զսպել ապստամբները, և չէ կարելի կանխատեսել թէ ի՞նչ կրնայ առաջ գալ: Հրամանատար Օթիս ապահով է թէ իր նաւատորմիդին օդնութեամբ անմիջապէս կը ջախջախէ ապստամբները, բայց իր ջանքն է ու է արիւնահեղութեան տեղի չի տալ:

— Ֆիլիպպեան բնակչութիւնը բողոքած է Միացեալ-Նահանգաց դէմ որ մերժած էր քննիչ յանձնախումբին մէջ ընդունել նաեւ կղզւոյն ներկայացուցիչները: Առանց այս վերջիներուն, կըսեն, կարելի չէ որ յանձնախումբը կղզւներուն կացութեան վրայ ճշգրիտ գաղափար մը կազմել յաջողի:

Ամերիկեան զինուորներու և տեղացի ընկիւններու միջեւ թըշնամական գործեր ամէն օր տեղի կուենան: Երկու կողմէ ալ յուզումը սաստիկ է:

— Սպանիոյ արտաքին գործոց նախարարը յատնած է թէ Սպանիո Ամերիկեան զաշնագիրը պիտի կնքուի ամսոյս 26ին:

**Գ Ո Ւ Պ Ա**

Կօմէջ յայտարարած է ամերիկեան կառավարութեան թէ 60 միլիոն տօլար կը պահանջէ իր բանակին համար: Մինչեւ այս պահարին յանձնուած Կօմէջ իր բանակը պիտի չի ցրուէ, և միայն ամիս մը պիտի սպասէ որպէս զի Ամերիկացիք իրենց որոշումները կղզւոյն մասին իմացընեն: Այն ատեն պիտի որոշէ թէ պէտք է Հալապ մտնել կամ լեռները քաշուիլ ու կրիւր շարունակել:

**Չէնճիկեցիներու**

Ս. Բէթէրագուրկէն անգլիական լրագրի մը քաշուած հեռագրի մը համաձայն, կը կարծուի թէ Ռուսիա պիտի յաջողի իր շրջաբերականին առաջին երկու յօդուածները ընդունել տալ, այսինքն ընդունիլ որ սպառազինութիւնները պակսեցուցուին և որոշեալ ժամանակ մը զինուորական ծախքերը չտեւցուին: Եթէ այս վերջին պայմանն ալ չընդունուի, Անգլիոյ դժկամակութեան պատճառով պիտի ըլլայ լոկ:

— Գերման խաղաղասէրներու ընկերութիւնը գումարում մը ունեցած է որուն բաղմամբ քաղաքական անձնաւորութիւններ ներկայ գտնուած են: Որոշած են աղերսագիր մը մատուցանել Ռայխսթակին զէնընկեցութեան ընդունուիլը խնդրելով և միանգամայն առաջարկելով որ խաղաղութեան քօմիթէ մը հաստատուի Պերլինի մէջ, Միւնիխի քօմիթէին նման: Բաղմամբ նշանաւոր անձեր հաւանութիւն ցցուցած են աղերսագիրն ստորագրելու:

**ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ**

Ենտի-Քուէի կողմը կառուցուելիք կեդրոնական բանտին յատակագիծը Բարիլի մէջ պատրաստուած ըլլալով Պոլիս շրջուեր է քննուելու համար:

— Այսօր Իշխանուհի ՄԱՐԻ-ԼՈՒԻՉԻ թաղման հանգէսը պիտի կատարուի Ֆիլիպպի մէջ:

Քաղաքիս բոլոր եկեղեցիներուն մէջ մինչեւ սամը 10ը պաշտօն պիտի կատարուի հանգուցեալին համար: Ամէն կարգիվաճառանոցները, զբօսավայրերը գոց պիտի մնան ամբողջ օրը:

— Լոնտոնի Բառ գրամատուէն անցեալ Բշ. 60,610 անգլ. ոսկի արժողութեամբ պանքնօթ գողցուած է: Գողբէն մին մէկ միլիոն ֆրանկ արժողութեամբ պանքնօթ ետ զրկեր է, հրամարելով զայն գրամի փոխելու զալարէն որ անշուշտ իրեն կրնար ֆրանս բերել: Գողբըրը գեռ գտնուած չեն:

— Անգլիոյ գաղթային նախարար Չէմպրլէն ճառախօսութիւն մը կատարելով ըսեր է թէ տ-

մենասերտ միութիւն կը տիրէ Անգլիոյ, իր գաղթականութեանց, Միացեալ Նահանգներու և բոլոր անկլօ-սաքսոնցեղերուն մէջ:

— Մազաոնի (Սպանիա) մէկ հանքին մէջ կաղային պայթում մը տեղի ունեցեր է: Գործուորներու մէկ մասը կարողացած է աղաւթիլ: 14 հողի սպանուեր են:

**Ա Ձ Դ**

Վառնայի Ընթերց. վարչութիւնը կը ծանուցանէ թէ, անցեալ կիրակի անդամներու բացակայութեան պատճառաւ կարելի չըլլալով ընդհ. ժողով գումարել, յետագայ է յանաշիկայ կիրակիին, 31 յնվր. ժողովը պիտի գումարուի Սիակեան վարժարանին մէջ:

**Պ Օ Ր Ս Ա**

Վառնա 26 Յունուար

ՊՈՒՂՏԱՅ	
Վակօն, լիպրա	55—58, հէքթօլ.
	9.40—10.60 ֆրանք
Արապա, լիպրա	55—60 հէքթօլ.
	9—12 ֆրանք
ԱՐԲԱ	
Լիպրա	42—50 հէքթօլ. 6.40—6.80 ֆրանք
ՄԻՍԻՐ	
Վակօն, 55—57 լիպրա,	6.10—6.20
Առապա, 55—60 լիպրա,	6.40—6.80
Կիւնկէ 15—20 վակօն, 25—30 առապա	կէլմէքաէ տիր:
ՏԱՐԸ	
Կիւնկէ 1,2 արապա կէլմէքաէ տիր.	58—60 լիպրա, 5.40—5.80 ֆրանք
Առապա մուամէլէսի նարուէն 21 ֆրանք	հիսապը իւէ տիր.

**ՎԱՐԴՕ**

ԵՐԿՈՒՍ ՍԷՐ  
(ՀԱՅ ՅԵՂԱՓՈՒՈՒԿԱՅԻՆ ԿԵԱՆՔԻԾ)  
( Գ ի ն 1 Ֆրանք )  
Մնացած սակաւաթիւ օրինակները կը ծախուին Վառնայի մէջ Շարժումի խմբագրատունը, Ֆիլիպպի Տ. Անտօն Կոչի մօտ, Ռուսլուք Հայկ Մալախեանի սրճարանը:

**ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ «ՆԱՐԺՈՒՄ»**

Կը տպագրուին ամէն լեղուէ այցետոմս, հասցեատոմս, նամակագրութիւն, հարսանեկան հրաւիրագիր, մահալագ, ինչպէս նաև պրօշիւններ:  
Գիներն յոյժ զիւրամատչելի:  
Ուրիշ քաղաքներէ եկած յանձնարարութիւններ ճշգրութեամբ և փութով կը կատարուին:

**ՈՒՇԱԳՐՈՒԹԻՒՆ**

Եթէ կուզէք հագնել կօշիկներ որոնք իրենց վրայ միացուեն ձեռի և զիմաց կուտուրեան կատարելութիւն և մանաւանդ գինի չափաւորութիւն, առանց վարանելու գինացէք Ստեփան Խորասանձեանի, Մուսայլա, բաղնիք փողոց, հաճի Հասան էֆենտի օթէլին տակ, հաւատացէք թէ սոթիւն պիտի օգտուիք:



Отговорникъ: А. СУКЯСОВЪ  
Печатница „Взаимность“, Варна